


## ՄԵՐ ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԸ

*Մենք մեր շուրջ գտնուող իրերուն կը ծանօթանանք մեր հինգ զգայարաններով:*



**Դիտել նկարը եւ պատասխանել հարցումներուն:**

**Ո՞ր զգայարանով՝**

**կը լսենք, կը տեսնենք, կը շօշափենք,  
կը համտեսենք, կը հոտոտենք:**



Ի՞նչ կը տեսնես պատկերին մէջ:

Երբ մուտք է, կրնա՞նք առարկաները տեսնել:

Առարկաներ տեսնելու համար ինչի՞ պէտք ունինք:

Երբ մուտք է, լոյս ինչպէ՞ս կրնանք ստանալ:


Շրջանակի մէջ ա՛ն լոյս տուող առարկաները:



Երբ մոմ վառենք, ..... կը ստանանք:

Լուսաւորուելու համար կը ..... ձեռք կամ  
ֆարիչ:

Տուներու մէջ էլեկտրականութիւն կը գործա-  
ծենք լուսաւորութեան համար:



Երբ գիշեր է, ճամբաները լուսաւորելու համար  
.....կը գործածենք:

Երբ ցերեկ է, լուսաւորութեան միջոցներ կը  
գործածենք:




Ինչո՞ւ:

Ընդօրինակէ.—

Արեւը մեզի կու տայ լոյս եւ ջերմութիւն:

.....

Երբ լոյս է, կը տեսնենք առարկաներու *ձեւը, չափը, ծաւալը եւ գոյները:*



Ներկէ՛



կարմիր



կապոյտ





կանաչ



դեղին

*Մեծ կը տեսնենք մօտ գտնուող առարկան.*

*Նայն առարկան փոքր կը տեսնենք երբ հեռու է:*







*Ո՞ր պատկերին մէջ տունը փոքր կ'երեւի:*

*Ո՞ր պատկերին մէջ տունը մեծ կ'երեւի:*

## Բ. ԼՍՈՂՈՒԹԻՒՆ

Մենք կը լսենք զանազան ձայներ:



Լսած ես այս առարկաներուն եւ անասուններուն ձայները:


Կապկէ՛ առարկայի մը ձայնը եւ ընկերոջդ հարցուր, թէ կապկածդ ո՛ր առարկան է:

Մենք կը լսենք զանազան ձայներ:

Մենք կրնանք հանել զանազան ձայներ:

Մենք առարկաները իրենց ձայներէն կը ճանչնանք:

Գ. ՀԱՄ



Տո՛ւր անունը բթու ուտելիքի մը:

Տո՛ւր անունը ֆաղցր ուտելիքի մը:

Գրէ՛ չորս գլխաւոր համերը.

....., ....., ....., .....

Ո՞ւր կը գտնուի լեզուն:

Ուտելիքներու համը լեզուով կրնանք գիտնալ:



Գոցէ՛ աչքերդ եւ փորձէ՛ համտեսել եւ գիտնալ  
համը տարբեր ուտելիքներու:



## Դ. ՀՈՏԱՌՈՒԹԻՒՆ



*Մենք կը զգանք առարկաներու հոտը:*

Վարդը անուշ բոյր ունի:

Քարիւղը անախորժ հոտ ունի:

Որոշ հոտեր մեզ կը զգուշացնեն:

Տուր անունը երկու առարկաներու, որոնք անուշ հոտ ունին:

Երբ աչքերդ գոց են, կրնա՞ս առարկաները իրենց հոտէն ճանչնալ:

## Ե. ՇՕՇԱՓԵԼԻՔ

Առարկաները կը նանչնանք, երբ զանոնք մեր  
ձեռքերով կը շօշափենք:



Ընդգծե՛՛ նիշդ պատասխանը:  
Գոց աչքերով, շօշափելով կընանք գիտնալ  
զնդակին 1) ձեւը, 2) գոյնը:

Ձեւէն գատ, այլ յատկութիւններ կրնանք գիտնալ շօշափելով:



կարծր



փափուկ



ողորկ



խորտուրորտ




պաղ




տաֆ






Դիտե՛ք նկարները եւ շրջանակի մէջ ա՛ն.—




Բաղցր առարկան:



Կակուղ առարկան:



Կլոր առարկան:



Կարծր առարկան:



անուշ հոտ ունեցող առարկան:

Ամբողջացո՛ւր:

Ականջով, ունգ, հինգ, շօշափելով,  
լեզուով, իրերը:

Մենք գգալու համար ունինք ..... գգայա-  
րաններ:

Մութին մէջ չենք տեսներ, բայց .....  
կրնանք առարկաներու ձեւը գիտնալ:

Հոտերը կ'առնենք ֆիթով, ֆիթին ծակերը  
..... կը կոչուին:

Ուտելիքներու համը կը գգանք .....

Ցերեկը մեր շուրջի մարդիկը եւ .....  
կը տեսնենք:

..... կը լսենք: Ականջին դուրսի մասը  
վրանն է, վրանը փոսիկներ ունի:

Տուփիկներուն մէջ փակցո՛ւր:

Տեսողութեան  
գգայարանը

Շօշափելիքը

Լսողութեան  
գգայարանը

Համի  
գգայարանը

Հոտի  
գգայարանը